

Պ-216-03.07.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.**

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 287-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«Հոդված 287. Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման գանգատարկման (բողոքարկման) կարգը
- 1) Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգատարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով՝ կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Վարչական ակտը չի կարող գանգատարկվել (բողոքարկվել) վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված գանգատը (բողոքը) ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման:
- 2) Սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 131, 132, 135.2 և 140 հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկելուց (բողոքարկվելուց) հետո:
- 3) Որոշումը վարչական կարգով գանգատարկվում է (բողոքարկվում է) վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին:

Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է բողոքարկվել նաև նույն

էլեկտրոնային փոստով՝ բողոքը ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ :»:

### **Հոդված 2.**

1. Օրենսգրքի 291-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

« 2. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքները քննվում են դրանց ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում: »:

### **Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ  
(Պ-216-03.07.2019-ՊԻ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Հոդված 1.

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 287-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 287 Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման ~~բողոքարկման~~ գանգատարկման (բողոքարկման) կարգը

- 4) Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է ~~բողոքարկվել~~ գանգատարկվել (բողոքարկվել) — սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Վարչական ակտը չի կարող ~~բողոքարկվել~~ գանգատարկվել (բողոքարկվել) վարչական կարգով, եթե նույն վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, իսկ եթե վարչական ակտի դեմ ներկայացված ~~բողոքը~~ գանգատը (բողոքը) ընդունվել է վարույթ դատական կարգով վարչական ակտի վիճարկումից առաջ, այդ դեպքում վարչական մարմնի հարուցած վարույթը ենթակա է կարճման:

~~5) Սույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:~~

~~Սույն մասով սահմանված կարգով վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվում է դրա ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում:~~

- 5) Սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, հիններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 131, 132, 135.2 և 140 հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:

6) Որոշումը վարչական կարգով ~~բողոքարկվում է~~ գանազատարկվում է (բողոքարկվում է) վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին:

Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է ~~բողոքարկվել~~ գանազատարկվել (բողոքարկվել) նաև նույն էլեկտրոնային փոստով բողոքը ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ: »:

### Հոդված 2.

2. Օրենսգրքի 291-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

« 2. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքները քննվում են դրանց ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում: »:

### Հոդված 23.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-216-03.07.2019-ՊԻ-011/1), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-216<sup>1</sup>-03.07.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

<i>No.</i>	<i>Առաջարկության հեղինակը</i>	<i>Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը</i>	<i>Առաջարկությունը (կոնկրետությունը, լրացումը)</i>	<i>Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը</i>	<i>Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը</i>
7.	Հեղինակ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը խմբագրել և ներկայացնել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 131, 132, 135.2 և 140 հոդվածներով սահմանված վարչական	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկելուց (բողոքարկվելուց) հետո: »		
2.	Կառավարություն	Նախագիծ	Նախագծում «բողոքարկվել» և «բողոք» բառերը զուգորդել համապատասխանաբար «գանգատարկվել» և «գանգատ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածով շարադրվող հոդվածի վերնագրից առաջ լրացնել «Հոդված 287.» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, 1-ին մաս	3. Նախագիծը լրացնել 2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 291-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. « 2. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքները քննվում են դրանց ստացման օրվանից տասնհինգօրյա	Ընդունվել է	Ընդունվել է

			Ժամկետում: »:		
5.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածով շարադրված 287-րդ հոդվածի մասե համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվական ակտերի մասին» օրենքի 1-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները նախատեսել առանձին հոդվածի տեսքով:	Ընդունվել է	Ընդունվել է